

ՔՈՅԻ ԱՆԱՆ ՅՈՅՍ ՉՈՒՆԻ, ՈՐ ՄԱԿ ՈՒԺԵՐ Կ'ԱՌԱՔՈՒՆ ԿԱԶԱ ԵՒ ԱՅՈՐՅՈՐԴԱՆԱՆ

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան երկ քառ, որ կապ է և Այսրորդանան ՄԱԿի վիճակը արագորակ աղբյուրը արդարև այլ լուսավիճ չէ, որովհետև Իսրայիլը կը մերժե միջազգային խաղաղարար ուժերու ներկայությունը: Անան մերժեց այն տարաձայնությունները, թե անձամբ հակադրուած է այդ ծրագրին, այլ պարզապէս ինք կը բացատրէ կացութիւնը եւ կ'ըսէ իրականութիւնը: Պաղեստինցիք ՄԱԿի երկու հասարակ վիճակը կը պահանջեն, իրեն դէտ, ինչպէս նաեւ իրեն պաշտպանութիւն պաղեստինցիներուն:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻՆ



Նախագահ Լահուտ կ'ընդունի Հարիրին:

Հանրապետութեան նախագահ Վոր. Էմիլ Լահուտ երկ Գաղափարային պալատին մէջ ընդունեց վարչապետ Ռաֆիք Հարիրին եւ անոր հետ քննարկեց ընդհանուր վարչապետութեան խորհրդարանի վստահութեան քուէին եւ այդ նիստերուն ընթացքին յայտարարուած երեսփոխաններու կեցուածքները, ինչպէս նաեւ Լիբանանի դէմ իրականացուած վերջին ռազմագործիւններն ու այս հարցին ՄԱԿի մէջ արծարծումը: Նախագահը եւ վարչապետը քննարկեցին նաեւ կառավարութեան այսօրուան նիստին օրակարգերը եւ Տոհայի մէջ գումարուելիք իսլամական գերաստիճանին արծարծուելիք հարցերն ու Լիբանանի ներկայացուցիչք առաջարկները:

Հանրապետութեան նախագահը երկ նաեւ ընդունեց Քուէյթի Էլեմուտքի եւ փոխարարմիջոցներու նախարար Շէյխ Ահմէտ Ապտալա Սուպահը, որուն կ'ընկերակցէր պաշտօնական պատուիրակութիւն մը եւ դեսպան Մոհամէտ Սալլալ:

Քուէյթցի պաշտօնատարը նախագահ Լահուտի փոխանցեց Քուէյթի իշխան ժապէրի եւ գահաժառանգ իշխանի ողջուններն ու յարգութեան մաղթանքները, ապա քննարկուեցան երկկողմանի յարաբերութիւններն ու Քուէյթի կողմէ Լիբանանի տրամադրուած օժանդակութիւնները: Նախագահ Լահուտ շնորհակալութիւն յայտնեց քուէյթեան պարկուտեան համար եւ դրուատեց յարաբերութեանց անբարեկարգումը:

Նախագահ Լահուտ ընդգծեց անհրաժեշտութիւնը՝ երկրին մէջ դրամանիշի կայունացման, որ հիմն է իբրևանեան տնտեսութեան վերականգնման եւ ընկերային ու տնտեսական կայունութեան հիմնական պայակներէն է:

Նախագահը իր այցելուներուն նաեւ ըսաւ, որ Լիբանանի մէջ դրամական ու դրամատնային հարցերուն վերաբերող օրէնքները գլխաւոր երաշխիքներն են պահպանելու այս բնագաւառին ներս Լիբանանի դերը:

Նախագահ Լահուտ նաեւ հաստատեց, որ նոր կառավարութիւնը տրամադիր է մշակելու այնպիսի օրինագիծեր, որոնք կը նպաստեն ներդրումները քաջալերող մթնոլորտի ստեղծումին:

«Պատերապմի տարիները սահմանափակած են Լիբանանի տնտեսական դերն ու շրջանին մէջ անոր իրաւաստի դիրքը, բայց չեն կրցած շնչել այդ դերը եւ Լիբանան աստիճանաբար կը վերադառնայ անոնց. կը վերահաստատուի երկրին ազատ տնտեսութեան նկատմամբ վստահութիւնը», ըսաւ ան:

«Հանրապետութեան նախագահը նաեւ ըսաւ, որ Լիբանան կը պահէ իր տնտեսութեան հզօրացման համար արաբ երկիրներու աջակցութիւնը, եւ այս նպատակին հասնելու համար համաձայնագիրներ պիտի ստորագրէ արաբ տնտեսական խմբարումներու հետ:

Նախագահը այս կեցուածքները յայտարարեց Միջազգային Առեւտրի Գրասենեակի նախագահ համար արաբ երկիրներու աջակցութիւնը, եւ այս նպատակին հասնելու համար համաձայնագիրներ պիտի ստորագրէ արաբ տնտեսական խմբարումներու հետ:

Մարոնիներու ընդհանուր խորհուրդի պատիրակութիւնը Ռեմոն Ռուֆայէի գլխաւորութեամբ նախագահը իրաւիբեց իր տարեկան ձեռնարկին, որ տեղի պիտի ունենայ Նոյեմբեր 18ին, «Պրիսթոն» պանդոկին մէջ:

Օմար Շրայի այցելեց նախագահ Լահուտի շնորհակալութիւն յայտնելու անոր միջամտութեան համար, որուն շնորհիւ իրաքեան բանակի շարքերուն մէջ իրանի կողմէ գերի բռնուելէ եւ 19 տարուան բանտարկութենէ ետք ազատ արձակուած է:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՈՒՇ ՅԱՂՈՒԿԱՆ՝ ՔԵՆԹԱՔԻ, ԻՆՏԻԱՆԱ ԵՒ ՎԻՐՃԻՆԻԱ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Միացեալ Նահանգներու նախագահական ընտրութեան առաջին արդիւնքները սկսան իրապարակելի այսօր առաւօտեան ժամը 1:00ին:

Քենթաքի եւ Ինտիանանահանգներուն արդիւնքները յայտարարուեցան ամէնէն առաջ: Ըստ «Մի. Էն. Էն.» պատկերասփիւռի կայանի հաղորդումներուն, Քենթաքի կառավարիչ, հանրապետական ձորճ Պուշ այս երկու նահանգներուն մէջ յաղթական դուրս եկած է պայքարին, ինչպէս արդէն կը նախատեսուէր:

Ժամը 2:00ին, իրապարակուեցան Վիրճինիայի արդիւնքները, որոնք եղան ի նպաստ Պուշի: Այն թեկնածուն, որ նահանգի մը քուէներուն մեծամասնութիւնը կը

շահի, կը ստանայ տըրեալ նահանգին ընտրական քուէն:

Քենթաքի կը ներկայացուէ 8, Ինտիանա՝ 12, իսկ Վիրճինիա՝ 13 ընտրական քուէ: 50 նահանգները ընդամենը կը ներկայացնեն 538 ընտրական քուէ: Իւրաքանչիւր նահանգ ունի իրեն համապատասխան ընտրական քուէ: Մեծագոյններն են Քալիֆորնիա եւ Նիւ Եորք: 270 ընտրական քուէ շահողը կ'ընտրուի նախագահ:

Արեւելեան նահանգներուն մեծ մասին պարագային սնտուկները փակուած էին արդէն ժամը 3:00ին: Արեւմտեան նահանգներուն մէջ, որոնց շարքին ամէնէն կարեւոր նահանգը նկատուող Քալիֆորնիա, սնտուկները պի-

տի փակուելին առաւօտեան ժամը 5:00ին:

Նշենք, որ ժամը 2:00ին իրապարակուած էին նաեւ Վերմոնթի (3 ընտրական քուէ) եւ Հարաւային Բարուայայի (8 ընտրական քուէ) արդիւնքները, 4որ շահած էր Վերմոնթը, իսկ Պուշ՝ Հարաւային Բարուայան:

Նշենք, որ նախագահական ընտրութիւններուն առընթերտեղի կ'ունենան նաեւ Օերակոյտի եւ Ներկայացուցիչներու Տան ընտրութիւններ: Օերակոյտը կը բաղկանայ 100 ձերբակրուականներէ, իսկ Ներկայացուցիչներու Տանը՝ 435 ներկայացուցիչներէ: Օերակոյտական ընտրութիւնը մասնակարեւոր է եւ պիտի ընտրուի միայն 34 ձերբակրուական:

ՊԱՂԵՍՏԻՆՑԻՔ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԱՑԻՔ ԿԸ ՓՈՐՁԵՆ ՄԵՂԱՅՆԵԼ ՏԱԳՆԱՊԸ

Պաղեստինցիները եւ իսրայէլցիները մասնաւոր միջոցառումներ որդեգրեցին մեղմացնելու համար վեց շաբաթէ ի վեր ծայր տուած տագնապը, մինչ Միացեալ Նահանգներուն նախագահ Պիլ Կլինթոնը կը շարունակէ խաղաղարար միջնորդի դերը: Վերջերս Վերջերս կատարուելիք իր իշխանութեան վերջին օրերուն նուաճումը մը արձանագրեց Նամար Միջին Արեւելքի մէջ:

Երկու շաբաթէն երեք շաբաթ լուսող Վերջերս ընթացքին սակայն, պաղեստինցի մը անձնասպանական ձախող գործողութիւն մը կատարեց իսրայէլեան ծովածովային պատկանող նաւերէն մէկուն

դէմ: Պաղեստինցի ձկնորսական ակտիւստներու նաւակը քառ էր դէպի իսրայէլեան մարտանաւուն ուղղուեթեամբ: Իսրայէլեան ծովածովային բանակը պայթած է կէս զիշերին, իսրայէլեան Եղիպտոս սահմանին մօտ, Միջերկրականի ջուրերուն մէջ: Պայթուածէն կարճ ատեն մը առաջ, յիշեալ նաւակը տեսնուած էր եղիպտական ջուրերուն մէջ, ուրկէ արագօրէն կ'ուղղուէր դէպի Հիւսիս: Բաները աւելցուց, որ ակտիւստներու նաւակին մէջ մարդ չկար:

Միւս կողմէ, իսրայէլեան բանակին ստորկականութիւնը հաղորդեց, որ պաղեստինցի սպասարկու-

թեան Շին Պէթի դեկավոր տեսակցութիւններ ունեցած է պաղեստինեան ապահովութեան ուժերուն պատասխանատուներուն հետ, քննարկելու համար լարուածութիւնը մեղմացնելու եւ արիւնահեղութեան վերջ տալու կարելիութիւնները:

«Հաւարեց» օրաթերթին հաղորդած լուրին համաձայն, տեսակցութիւնները տեղի ունեցած են քանի մը օր առաջ, Գահիթի մէջ: Իսրայէլ երկ նաեւ վերաբարձու կապիտալային օդակայանը, որ անցողի վեց շաբաթուան ընթացքին քանի մը անգամ փակուեցաւ եւ վերաբարձուեցաւ: Իսկ

Շար-ը՝ էջ 10

ԱՆԳՈՐԱ ԿՐԱՅ ՊԱՏՐԱՍ ԸԼԼԱԼ ՔԻՐՐՏ ԲԱՂԱՔԱՑԻՆԵՐՈՒՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՒԵԼԻ ԼԱՅՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐ ՏԱԼՈՒ

ԱՆԳՈՐԱ, 7 (ՌՈՅ-ԹՐԸ).- Թուրքիոյ փոխ վարչապետ Մետուք Երլմազ Երեքշաբթի օր յայտնած է, թէ Ազգային կրնայ պատրաստ ըլլալ քիւրտ քաղաքացիներուն մշակութային աւելի յայն իրաւունքներ տալու, քայլ մը, որ կրնայ նպաստել Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան առջեւ ցցուող մեծ խոչընդոտի մը վերացումը:

Երլմազի այս արտայայտութիւնները լոյս տեսած են «Ենի Պիւնըր» թերթին մէջ: Եւրոպական Միութիւնը Չորեքշաբթի օր (այսօր) պիտի յայտարարէ այն բարեկարգումները, որոնց Թուրքիա պիտի դիմէ անդամակցութեան

բանակցութիւններու սկսելէ առաջ:

Կ'ակնկալուի, որ փաստաթուղթը նկատուի ունենայ թրքական պայմանութիւնները, խուսափելով այն բաներէն, որոնք Թուրքիոյ մէջ շատ վիճելի կը նկատուին: Անոնց շարքին են «քիւրտ» եւ «փոքրամասնութիւն»: «Որեւէ պարտադրանք չկայ մեր քաղաքացիներու մէջ խմբարար փոքրամասնութիւն հոշակելու», ըսած է Երլմազ, որ պատասխանատու է Ե. Միութեան հետ կապուած հարցերու:

«Այսուհանդերձ պիտի չէ կրկէնք մեր քաղաքացիները, որոնք տարբեր յատկանիշներ ունին, հիմնական իրաւունքներէ եւ ազատութիւններէ»,

դիտել տուած է ան հարցազրոյցին ընթացքին:

Թուրքիա իր հայ, յոյն եւ իրեայ քաղաքացիները պաշտօնապէս փոքրամասնութիւններ կը նկատէ, սակայն անիկա կը մերժէ այս իրողավիճակը տալ քիւրտներուն, այն պատճառաբանութեամբ, թէ անոնք թուրք քաղաքացիներ են, հակառակ ծագումով քիւրտ ըլլալուն:

Պաշտօնատարներ կը շեշտեն, որ քիւրտերը փոքրամասնութիւն նկատուել կրնայ ի վնաս պետութեան միասնականութեան ըլլալ եւ պիտի աջատողական ըմբոստներուն պիտի մը կրնայ նկատուիլ:

Շար-ը՝ էջ 2

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԵԼԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՍ ԸԼԼԱԼՈՎ ՖՐԱՆՍԱՅԻ ԾԵՐԱԿՈՅՏԻ ՕՐԱԿԱՐԳԻՆ ՎՐԱՅ

Ֆրանսայի Օերակոյտը երկ գիշեր պիտի քննարկէր Հայկական Ցեղասպանութեան մասին բանաձեր:

Նախապէս բանաձերը վաւերացուած էր Ֆրանսայի խորհրդարանին կողմէ: Օերակոյտը սակայն 22 Փետրուար 2000ին մերժած էր պայն առնել իր օրակարգին վրայ, պատճառաբանելով, որ խորհրդարանը իրաւունք չունի պատմական դէպքի մը շուրջ դատումներ կատարելու:

Թրքական «Անատոլոյ» լրատու գործակալութեան համաձայն, բանաձերը այս անգամ կը ներկայացուի անձնական նախաձեռնութեամբ: Բանաձերը կը նշէ. «Ֆրանսա պաշտօնապէս կը ճանչնայ, որ հայերը Ցեղասպանութեան արարքի ենթարկուած են 1915ին»: Թուրքիոյ նախագահ Ահմէտ Նեճտէթ Սեպեր, վարչապետ Պիլէթ Էճէիտ եւ պաշտպանութեան նախարար Չաքմաքոլլու Ֆրանսայի իրենց պաշտօնակիցներուն նամակներ յղած են, արտայայտելով Թուրքիոյ պայմանութիւնը այս հարցին նկատմամբ:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱՌՈՒՅՈՒՄԸ ԸՆԹԱՅՔԻ ՄԷՋ

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՅՍՕՐ ԿԸ ՄԵԿՆԻ ՎԱՏԻԿԱՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ. երկ Գերագոյն Հոգեւոր խորհուրդի անդամներու ուղեկցութեամբ այցելեց Երեւանի մէջ կառուցող Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի:

Եկեղեցւոյ մէջ հաւաքուած հաւատացեալներուն Գարեգին Բ. յայտնեց, որ երջանկայիշատակ Գարեգին Ա. իր անձնական խնայողութիւններէն շուրջ 750 հազար տոլար կտակած է եկեղեցւոյ շինարարութեան: Գարեգին Ա. ի նամակները եւ թուղթերը կարգաւորելու ընթացքին գտնուած է այդ կտակը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին կը կառուցուի Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը պետական կրօն հոշակելու 1700ամեակին առիթով:

1700ամեակի տօնակատարութիւններուն սկիզբը կը նշուի 31 Գեկտեմբերին: Խոր վիրապէս հանդիսաւոր թափօրով Ս. Գրիգոր Լուսաւորիչի անմար կանթղի լոյսը պիտի բերուի Մայր Աթոռ եւ պիտի դրուի Ս. Սեղանին վրայ:

●ԳԱՐԵԳԻՆ Բ. կաթողիկոս այսօր վատիկան կը հասնի: Յովհաննէս Պօղոս Բ. պապը վեհափառին պիտի յանձնէ Ս. Գրիգոր Լուսաւորիչի մասունքներէն, որոնք սուրբ Երեւանի մէջ կը պահուին Նափոյի Ս. Գրիգոր վանքին մէջ: Մասունքները հետագային պիտի վերադառնան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ ՀԱՍՏՐ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԻ ՄԱՍՈՒՆՔՆԵՐՈՒ ԳԱՐԵԳԻՆ Բ. ՎԵՆԱՓՈՒՆԻՆ ՄՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆ. ՆԵՐՍԷՍ - ՊԵՏՐՈՍ ԺԹ. ՄԵԿՆԵՑԱԻ ՀՌՈՍ

Այսօր, Չորեքշաբթի առաւօտեան Հոռմ մեկնեցաւ կաթողիկէ Հայոց Ներսէս - Պետրոս ԺԹ. կաթողիկոս-պատրիարքը, մասնակցելու համար Վատիկանի մէջ տեղի ունենալիք այն արարողութիւններուն, որոնց ընթացքին Յովհաննէս-Պօղոս Բ. սրբապետը Ն. Ս. Ս. Ս. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսին հանդիսաւորապէս պիտի յանձնէ Ս. Գրիգոր Լուսաւորիչի սրբալոյս մասունքները: Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսը, որ Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր խորհուրդի անդամներուն ընկերակցութեամբ Հոռմ պիտի հասնի այսօր, իսկ վաղը պիտի այցելէ Հոռմի Լեւոնեան Բահանայապետական նորընծայարանը, որ պիտի պիտի ընդունի Ներսէս-Պետրոս ԺԹ. Ամենապատիւ հոգեւոր տէրը:

ԳԻՒՆ ՊԱՏՐԱՐՔԱՐԱՆԻ

**ԵՐԵՍՓՈՒԽԱՆ ԼԱՀՈՒՏ
ԱՆՆՆԻՆԵՆ ԿԸ ՆԿԱՏԷ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ
ԳԾՈՎ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ
ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ**

Երեսփոխան էմիլ Էմիլ Լահուտ երեկ ազգային լրատու գործակալությունների հարցազրույցի մը մէջ անընդունելի նկատեց հայ համայնքին նկատմամբ կառավարության կազմութեան գծով վերաբերմունքը:

«Կոչ կ'ուղղեմ վարչապետին՝ վերատեսուծեան ենթարկելու հարցը եւ իրաւունքը տալու իրաւատիրոջ», ըսաւ ան:

Երեսփոխան Լահուտ նաեւ քննադատեց կիներու բացակայութիւնը կառավարութեան եւ կոչ ուղղեց կառավարութեան՝ ձեռնարկելու ազգային հաշտութեան իրազորմունքին եւ վերջնականապէս դարձնելու պատերազմի էջը, այլապէս Լիբանան պիտի չկարենայ «յարութիւն առնել»: Ան նաեւ պահանջեց լարգաւածման ծրագիրներ կատարել Մեթնի մէջ:

«Միջ յոյսեր կապուած են կառավարութեան եւ ձախողութիւնը արգիլուած է. վատահոլութիւնը շնորհեցինք լրկերային եւ ապրուստի հարցերու դարձանումին համար եւ պիտի չենուենք այս ուղղութեամբ կառավարութեան աշխատանքին», ըսաւ ան, կոչ ուղղելով անկեղծ հարեանսէրներուն առիթ տալու վարչապետին եւ կառավարութեան:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՄԱԿԻ ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի հարաւային Լիբանանի մէջ ներկայացուցիչ Ռոյթ Բնուրթուն երէկ հրապարակուած հաղորդագրութեամբ մը յայտնեց, թէ Ֆինիլլի Կինք տեղեակ պահած է իսրայէլեան օդանւերուն եւ ուղղաթիռներուն կողմէ նախանցեալ օր Լիբանանի օդային սահմաններէն ներս թափանցումին մասին:

«Նման խախտումները յաւելեալ մտահոգութիւն կը պատճառեն. հիմնական հարց դարձած է անյապաղ վերջ դնելու կապոյտ զինք խախտումներուն», ըսաւ ան:

● ՇԻՆԵՒՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ խորհուրդի փոխ նախագահ շէյխ Ապտէլ Ամիր Քապալան ըսաւ, որ Լիբանանի, Սուրիոյ եւ պաղեստինցիներուն դէմ իսրայէլեան ռազմականներու եւ սպանալիքներու սաստկացումին յոյսին տակ կենսական կարիք կը դառնայ Կանոնը դիմագրաւելու համար արաբական եւ իսլամական պարակցութեան ամրապնդումը: Այս ուղղութեամբ առաջին քայլը պէտք է ըլլայ իբրանաւետարակական յարաբերութեան ամրապնդումը, մանաւանդ որ Լիբանան կարիք ունի Սուրիոյ օժանդակութեան, ամբողջացնելու համար հարաւի պատագրուած, ապա նաեւ Կոլանի եւ պաղեստինի պատագրուածը:

● ԻՐԱՅԷԼԻ վարչապետ Էհուտ Պարաք երէկ իսրայէլեան քանակի ձայնասփիռի կայանին տրուած հարցազրույցի մը մէջ ըսաւ, որ իբրանաւեի իսրայէլեան սահմանագիծին վրայ յարուածութիւն կը տիրէ, յատկապէս Մապարէի Շրպայանի շրջանին մէջ:

«Սահմանի հանդիստութիւնն ու կայունութիւնը պատասխանատուութիւնն է իբրանաւեան եւ սուրիական կառավարութիւններուն», ըսաւ ան:

**ՈՒԱԼԻՏ ԺՈՄՊԼԱԹԻ ՍՈՒՐԻԱ
ՍՈՒՏՔԸ ԱՐԳԻՆՈՒԱԾ**

Տեղեկատուական աղբիւրներ երէկ հաղորդեցին, որ Սուրիոյ իշխանութիւնները արգիլած են երեսփոխան Ռալֆ Ժոմպլաթի Սուրիա մուտքը: Մինչ ժոմպլաթ «Ժողովրդավարական Հանդիպում» երեսփոխանական պլոքին անունով հրապարակուած հաղորդագրութեամբ մը պատասխանեց իսրայէլեան կառավարութեան ինքնապատշաճ կողմէ արգիլուած ընկերութեան իրաւունքները: Քաղաքական մարտիկները իրենց տեղեկութիւնները հաղորդեցին, թէ սուրիական «բարձր մակարդակ» շրջաբերական մը արգիլած է երեսփոխան Ռալֆ Ժոմպլաթի եւ անոր գլխաւորած ընկերութեան Յառաջդիմական կուսակցութեան ղեկավար տարբերուն Սուրիա մուտքը: Ըստ նոյն աղբիւր-

ներուն, շրջաբերական այս որոշումը հիմնաւորած է նկատել տալով, որ Սուրիա մուտքը կ'արգիլուի բոլոր անոնց, որոնք կը փորձեն Լիբանանի մէջ ծառայել Իսրայէլի:

Լիբանանեան լրատու աղբիւրները Սուրիոյ մօտիկ աղբիւրներէ քաղելով իրենց տեղեկութիւնները ըսին, որ ժոմպլաթի Սուրիա մուտքը կը մնայ արտօնուած, ինչպէս բոլոր իբրանաւեցիներուն, բայց անոր պաշտօնական այցելութիւններն ու հանդիպումները անբաղաժիք են:

Ըստ իբրանաւեան տեղեկատուութեան, ժոմպլաթ շնչած է երէկուան իր հանդիպումները Սէն ժոզէֆ համալսարանի ուսանողներուն եւ «Էն. Պի. Էն.» պատկերասփիռի կայանին հետ:

«Ժողովրդավարական Հանդիպում» պլոքի գրասենեակը հաղորդագրութեամբ մը յայտարարեց, որ ժոմպլաթ Չորեքշաբթի օր պիտի ունենար Ֆրանսական համալսարանի ուսանողներուն հետ հանդիպում մը եւ «Էն. Պի. Էն.» պատկերասփիռի կայանին հետ հարցազրույց մը, բայց ան շնչած է Կանոնը, նկատելով որ տիրող «քաղաքական սեպեկութեան» մթնոլորտը, որ կը տիրէ երկրին մէջ:

**ՊԸՐՐԻ ԸՆԴՈՒՆԵՅ
ՌՈՒՍԻՈՅ ԴԵՍՊԱՆԸ**



Պըրրի Կ'ընդունի Ռուսիոյ դեսպանը:

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երէկ ընդունեց Ռուսիոյ դեսպան Պորիս Պոլոթնիկը, որ յայտարարեց, թէ անոր փոխանցած է Տումայի նախագահ Կենատի Սելեպինին Նամակ մը, որ կը շնորհակտը Պըրրիի վերջնականութիւնը, մարտիկները երկու երկիրներու խորհրդարանական յարաբերութիւնները: Ան նաեւ փոխանցեց Ռուսիոյ դաշնակցային խորհուրդի նախագահ Իվոյ Ս. Թրոյեւին շնորհագրական նամակ մը, որուն մէջ կը հստատուէ, թէ ռուս խորհրդարանականները մեծ կարելորութիւն կ'ընծայեն Միջին Արեւելքի մէջ արդար եւ վերջնական խաղաղութեան հաստատումին, որ պէտք է հիմնուի Ապահովութեան խորհուրդի որոշումներուն եւ «խաղաղութեան փոխարէն հող» սկզբունքին վրայ:

Միւս կողմէ, Լեհաստանի դեսպան Թատուշ Սթրոյաք Պըրրիի յանձնեց Լեհաստանի Օերակոյտի նախագահ Էլիաս Բրիստովիաքին եւ խորհրդարանի նախագահ Մաչէ Պլաչէնսքիէն շնորհակարանական նամակներ:

Կ'ՈՒԶՈՒԻՆ

● Ոսկերիչ, մոմի վրայ աշխատող վարպետ գործաւորուհիներ: Հեռ. 01-260232:

ԲԱՆՏԱՒՈՐՈՒԾ

Տէր եւ տիկին Վարդան եւ Մարալ Թաւաքեան բախտաւորուած են առջինեկ առջին կաւակով մը՝ ԱՐԻԱՆԷ - ՄԱՐԻԱ Պէյրութ, 7 Նոյեմբեր 2000

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ

5 ՓԵՏՐՈՒՄ 2001 Ը.Յ.Դ. «ՊԱՐԵԳՆԻ ՆՇՂԵՐ» ԿՈՄԻՏԷ ԶԱԼԸԱ

**ԼԻԲԱՆԱՆ ՔՈՏԻ
ԱՆԱՆԵՆ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ
ՍԱՆՁԵԼ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ
ՈՏՆԶ ԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ**



Համմուտ Կ'ընդունի Մաքլիքընը:

Արտաքին գործոց նախարար Մահմուտ Համմուտ երէկ յայտարարեց, թէ հանրապետութեան նախագահ Կոր. Էմիլ Լահուտի պահանջով ՄԱԿի մէջ Լիբանանի դեսպան Սալիմ Թատուրիին պահանջած է ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի եւ Ապահովութեան խորհուրդին փոխանցել իսրայէլեան օդուծին Լիբանանի դէմ ռազմականներուն հարցը, որ Լիբանանի գերիշխանութեան եւ ՄԱԿի թիւ 425 որոշումի խախտումներ են:

Իսլամական Խորհրդաժողովի Կապակերպութեան գերատիճանի նախապատրաստութեան համար գումարուող կապակերպութեան անգամ երկիրներու արտաքին գործոց նախարարներու ժողովին մասնակցելու համար Տոնաւեի մեկնելէ առաջ, նախարար Համմուտ նաեւ յայտարարեց, որ Լիբանան ժողովին պիտի ներկայացնէ երկու որոշումի առաջարկ. առաջինը կը պահանջէ օրակցութիւն յայտնել Լիբանանի, ամբողջացնելու համար Մապարէի Շրպայանի պատագրուած, այսինքն ամբողջացնելու թիւ 425 որոշումի գործադրութիւնը: Երկրորդ առաջարկը կը պահանջէ յիշեցնել եւ հաստատել արաբական եւ իսլամական գերատիճաններու ընթացքին նախապէս Լիբանանի խոստացուած դրամական եւ տնտեսական օժանդակութիւնները:

ՄԱԷԼԻՆԸՆ ԸՏԵ

Միւս կողմէ, նախարար Համմուտ երէկ ընդունեց այցելութիւնը Բրիտանիոյ դեսպան Տէր Կլոս Մաքլիքընի, որ յայտարարեց, թէ շնորհաւորած է նախարարին նոր պաշտօնը:

«Հարաւի մէջ տիրող վիճակին մասին հարցումի մը պատասխանելով, Մաքլիքըն ըսաւ, որ բրիտանական կառավարութիւնը կը հետաքրքրուի բոլոր այն դէպքերով եւ խախտումներով, որոնք յարուածութիւնը կը բարձրացնեն եւ անդրադարձներ կ'ունենան շրջանային վիճակի վրայ, եւ ինքնապապումի կոչ կ'ուղղէ բոլոր կողմերուն: «Պէտք է միշտ յուրջ մօտենալ իսրայէլեան սպառնալիքներուն», ըսաւ ան:

ԱՆԳԱՐԱ ԿՐՆԱՅ ՊԱՏՐԱՍ ԸԼԼԱԼ...

Յայտնապէս այդ մտավախութիւնները փարատելու առաջադրութեամբ, Երլմայ խորհրդարանական ժողովի մը իր պահպանողական երեսփոխաններուն յայտնած է, թէ Ե. Միութեան փաստաթուղթը պիտի ընդունի միայն եթէ անիկա վիճելի բառերէ խուսափի:

«Այս փաստաթուղթը մեր կառավարութեան կողմէ պիտի ընդունուի իբրեւ ճամբու քարտէս՝ Ե. Միութեան հետ ներդաշնակման մեր աշխատանքին համար, եթէ անիկա չընդգրկէ յայտարարութիւններ, զորս չենք կրնար ընդունիլ», յայտնած է Երլմայ:

«24 ժամ մնացած է, ո՛չ քրտերէնիս եւ ո՛չ փոքր մամսնութեան», ըսած է ազգայնական «Հիւրրիէթ» թերթը «Անդամակցութեան Գործակցութեան Համաձայնագիրին» Չորեքշաբթի օրուան հրապարակումի նախօրեակին:

Հարցը Թուրքիա - Ե. Միութիւն յարաբերութեան մէջ ամենէն նուրբ հարցերէն մէկն է: Ե. Միութեան պաշտօնատարներ թրքական անհանդուրժողութիւնը խոչընդոտում կը նկատեն հարաւարեւելեան գօտիին մէջ խաղաղութեան ամրապնդումին դէմ:

Պոքր կ'ուզէ, որ Թուրքիա իր 12 միլիոն քիւրտ քաղաքացիներուն իրաւունք տայ դպրոցներուն մէջ իրենց լեզուն սորվելու եւ սփռումները քրտերէն լեզուով կատարելու: Թուրքիա երկուքն այ կ'արգիլէ: Անիկա առանց յայտարարելու՝ քիւրտերու գոյութեան ճանաչում տալու սկսած է շուրջ 10 տարի առաջ:

Պաշտօնատարներ կը յայտնեն, որ Ե. Միութեան բարեկարգումներու ցանկը անպիսի ձեւով պիտի դրուի, որ անիկա Թուրքիոյ կողմէ ընդհանուր գիծերու մէջ ընդունելի ըլլայ: Սակայն միաժամանակ անիկա բացարձակապէս յստակ պէտք է դարձնէ, թէ ի՞նչ կը սպասէ Թուրքիային:

Եթէ անիկա բանավէճերու շատ առիթ տուող արտայայտութիւններ գործածէ, փաստաթուղթը կրնայ մերժուիլ Ե. Միութեան նախարարաց խորհուրդին կողմէ կամ Եւրոպական Յանձնաժողովին եւ Անգարայի միջեւ հակամարտութեան առանցք կրնայ դառնալ:

Երլմայ չէ բացատրած, թէ ի՞նչ կը հասկնայ երբ «հիմնական իրաւունքներ եւ պատուութիւններ» կ'ըսէ:

Կարգ մը թերթեր ըսած են, թէ Թուրքիա կ'ուզէ քրտերէնով դասերը երկրորդական վարժարաններէն դուրս ձգել, սակայն անիկա պատրաստ է արտօնելու, որ քրտերէն դասընթացքներ ըլլան անձնական գիշերային դպրոցներու մէջ:

Պոքր կ'ուզէ, որ Թուրքիա իր 12 միլիոն քիւրտ քաղաքացիներուն իրաւունք տայ դպրոցներուն մէջ իրենց լեզուն սորվելու եւ սփռումները քրտերէն լեզուով կատարելու: Թուրքիա երկուքն այ կ'արգիլէ: Անիկա առանց յայտարարելու՝ քիւրտերու գոյութեան ճանաչում տալու սկսած է շուրջ 10 տարի առաջ:

Պաշտօնատարներ կը յայտնեն, որ Ե. Միութեան բարեկարգումներու ցանկը անպիսի ձեւով պիտի դրուի, որ անիկա Թուրքիոյ կողմէ ընդհանուր գիծերու մէջ ընդունելի ըլլայ: Սակայն միաժամանակ անիկա բացարձակապէս յստակ պէտք է դարձնէ, թէ ի՞նչ կը սպասէ Թուրքիային:

Եթէ անիկա բանավէճերու շատ առիթ տուող արտայայտութիւններ գործածէ, փաստաթուղթը կրնայ մերժուիլ Ե. Միութեան նախարարաց խորհուրդին կողմէ կամ Եւրոպական Յանձնաժողովին եւ Անգարայի միջեւ հակամարտութեան առանցք կրնայ դառնալ:

Երլմայ չէ բացատրած, թէ ի՞նչ կը հասկնայ երբ «հիմնական իրաւունքներ եւ պատուութիւններ» կ'ըսէ:

Կարգ մը թերթեր ըսած են, թէ Թուրքիա կ'ուզէ քրտերէնով դասերը երկրորդական վարժարաններէն դուրս ձգել, սակայն անիկա պատրաստ է արտօնելու, որ քրտերէն դասընթացքներ ըլլան անձնական գիշերային դպրոցներու մէջ:

ԱՇՏԵԱՆ ԹՐԱԲԸԼ

● 12 Նոյեմբերին, միօրեայ շրջապտոյտ դէպի Գամասիոն - Սետնայա - Մապուլա կէտորտուն ճաշով, միայն 22\$:

● Մօտ օրէն Նոր Տարուան շրջապտոյտներ դէպի Հայաստան եւ Կիպրոս:

Արձանագրութեան համար դիմել ԱՇՏԵԱՆ ԹՐԱԲԸԼ հեռ. 01-261177, 01-240654 եւ 03-233974:

ԿՈՒԶՈՒԻ

«Քամարո» ընկերութիւնը, Լիբանանի մէջ ձաղտաբարութեան իր մարզի թիւ 1 հայթայթողը, կարիքը ունի՝

- Վաճառորդի (salesman)՝ արհեստագիտական արտադրութիւններ վաճառելու համար
- Ելեկտրագտի (electronics technician)
- Ջրաբաշխութեան մասնագտի (hydraulic technician)

Դիմողներուն տարիքը պէտք է ըլլայ 25ի եւ 45ի միջեւ:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել 01-800563/4 եւ 01-684856 (Տըրուէնի) թիւերուն կամ Սի. Վի. զրկել հետեւեալ ֆաքսի թիւին՝ 01-808730:

**Ը. Յ. Դ. ԶՐԻՍՏԱՓՈՐ ԿՈՄԻՏԵՆՈՒԹԵԱՆ
75ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ**

**Ը. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներէն՝
ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ՔԱՆԴԱԿԻ
ԲԱՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ**

**Քամախօս՝
ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏԻՉԵԱՆ**

Տեղի կ'ունենայ Կիրակի, 12 Նոյեմբեր 2000, երկուցեան ժամը 6:00ին, Համազգայնի Նշան Փալատեան ճեմարանի շրջափակէն ներս:

ՇՐԱԿԵՐ

Միջազգային Քաղաքական

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԶՔ ԴՐԱԾ ԵՆ ՃԱՓՈՆԻ ՀԵՏ ԻՐԱՆԻ ՔԱՐԻԻՂԻ ՄԵԾ ԳՈՐԾԱՐՔԻՆ ՎՐԱՅ

Իրան անցեալ շաբաթ համաձայնեցաւ ճափոնական ընկերութիւններու բանակցութեան իրաւունք տալ Ազատեկան քարիւղի հանքին պեղումներու եւ զարգացման համար: Ազատեկան աշխարհի քարիւղի մեծագոյնը հանքերէն է, որ տակաւին չէ շահագործուած եւ օրական 300 հազար տակաւ քարիւղ արտադրելու կարողութիւն ունի:

Դէտեր կ'ըսեն, որ Իրանի այս առաջարկը անգամ մը եւս լուսանցքի մէջ ձգած է ամերիկեան ընկերութիւնները, որոնք, ըստ ամերիկեան օրէնքի մը, իրաւունք չունին Իրանի հետ առեւտրական մեծ համաձայնագիրներ կնքելու:

«Իրանի կողմէ քաղաքական շատ իմաստուն քայլ է ձգուածը՝ քարիւղ հիմնական սպառող մը, ՕՓԷՔի պեղումներուն մասնակից դարձնելը», կ'ըսէ Տրեսուրր Քլեյմոնտը Պենսիլվանիա Վարեզի: «Սակայն Ազատեկանն առաւելագոյն շահը ապահովելու համար ամերիկեան ընկերութիւնները եւս, որոնք պեղումներու իմաստով զարգացած արհեստագիտութիւն ունին պէտք է մասնակից դարձնել», կ'ըսէ ան:

Ճափոնի համար, որ քարիւղի իր բոլոր կարիքները կը հոգայ ներածուած միջոցով, քարիւղի մատակարարման ապահովութիւնը առաջնակարգ հարց է: «Ճափոն երկար ժամանակ է, որ իր հայեացքը ուղղած է Ազատեկան»

նին», կ'ըսէ Թեհրանի մէջ Իրանի քարիւղի ընկերութեան աղբիւր մը:

Ճափոնական ընկերութիւնները դժկամած են Իրանի մէջ ներդրումներ կատարելու, մասամբ՝ Ուաշինկթընի Իրան - Լիպիա պատժամիջոցներու օրէնքին (ԻԼՍԱ) պատճառով: Ըստ այդ օրէնքին, Ուաշինկթըն պատժամիջոցներ պիտի որդեգրէ օտար այն ընկերութիւններուն դէմ, որոնք աւելի քան 20 միլիոն տոլարի ներդրումներ կը կատարեն Իրանի եւ Լիպիոյ մէջ:

Սակայն Թեհրանի մէջ աղբիւրներու համաձայն, Ազատեկանի այդ բաժինը այս հանգրուանին ամբողջութեամբ ճափոնական ընկերութիւններուն կը պատկանի: «Վերջապէս, Ճափոն միշտ օգնած է Իրանին յուսելուն ժամանակներուն», կ'ըսէ Իրանեան աղբիւր մը:

Ազատեկանի շահագործման մասին համաձայնութեան կնքումին իրրեւնախապայման՝ Թեհրան կրնայ Ճափոնէն պահանջել, որ ան հեղուկ կազ դնէ կամ այլ ապրանքներ ներածէ Իրանէն: «Առեւտրի հաւասարակշռութիւնը շատ կարեւոր է Իրանի համար», կ'ըսէ աղբիւր մը:

Իրանի քարիւղի մարզի պաշտօնատարներ կ'ըսեն, թէ Իրանի քարիւղի ազգային ընկերութիւնը կրնայ զարգացնել քարիւղի հեղանակահանքին մէկ բաժինը, որ կը գտնուի Իրաքի սահմանին վրայ: «Ասիկա լաւագոյն

պաշարներէն մէկն է, եւ Իրան չ'ուզեր, որ զայն դիւրութեամբ յանձնէ օտար ընկերութիւններուն», կ'ըսէ Իրանեան աղբիւր մը: «Սակայն, եթէ Ճափոն վճռական է, Իրան կրնայ պիջոններու համար ուղիներ գտնել», կ'ըսէ ան:

Ամերիկեան ընկերութիւնները դժուար թէ կարենան Ազատեկանին հասնիլ, եթէ նոյնիսկ պատժամիջոցները ջնջուին: «Ամերիկեան ընկերութիւններու դէմ որեւէ սահմանափակումներ չկան, սակայն Թեհրան պիտի չուզէ նմանօրինակ հրաշալի քարիւղի հանքի մը մէկ բաժինը իրենց տրամադրել», կ'ըսէ Իրանեան աղբիւր մը:

Սակայն, դէտերու համաձայն նկատուեցաւ, որ ճափոնի ծաւալը, որ կը կարծուի մեծ ներդրումներու եւ բարդ արհեստագիտութեան, Իրան կրնայ մեղմացնել իր կեցուածքը: Իրանեան աղբիւրի մը համաձայն, ամերիկեան Քոնոքո ընկերութիւնը, որ երկար տարիներ գործունէութիւն ծաւալած է Իրանի մէջ, կրնայ աշխատանքներ մասնակից դառնալու համար առաջինը զիրքին վրայ նկատուել, երբ Ուաշինկթըն ջնջէ պատժամիջոցները:

«Քոնոքո միշտ ալ լաւ գործակցութիւն ցուցաբերած է եւ մօտէն կապի մէջ կը մնայ», կ'ըսէ նոյն աղբիւրը: Ամերիկեան ընկերութիւնը Սիրիոյ քարիւղի հանքին պեղումներու համար համաձայնութիւն մը կնքած էր

Իրանի հետ, սակայն 1995ին, երբ Ուաշինկթըն որդեգրեց պատժամիջոցները, գործարքը զիջեցաւ Ֆրանսական «Թոթալ» ընկերութեան:

Քոնոքո վերջերս յայտնեց, որ վերլուծած է Ազատեկանի երկրաշարժային տուեալները, կըր Իրանի քարիւղի սղագային ընկերութիւնը ըսած էր, թէ հանքին պեղումներու համար կրնայ նկատի առնել ամերիկեան ընկերութիւնը, եթէ պատժամիջոցները ջնջուին:

Ամերիկեան ընկերութիւններ, ինչպէս՝ Էքսոն Մոպիլ, Շելլոն եւ Քոնոքո, կապ կը պահեն Թեհրանի հետ եւ պատժամիջոցներու դէմ արշալի ձեռնարկած են:

Իրանցի պաշտօնատարներ կ'ըսեն, թէ ամերիկեան ընկերութիւններ մեծ հետաքրքրութիւն կը ցուցաբերեն Իրանի նկատմամբ, հատաառով, որ ամերիկեան արգելքները պիտի ջնջուին, երբ Օգոստոս 2001ին կ'աւարտի ԻԼՍԱի ժամկէտը:

Ուաշինկթըն դեռ միջոցառումներ պիտի դիմէ Իրանի հետ համաձայնութիւններ կնքած կարգ մը օտար ընկերութիւններու դէմ, ինչպէս՝ Էնի, Թոթալ Ֆին Էլֆ եւ Շէլ: Այս ընկերութիւններուն կողքին Լամսօ եւ Պի Փի



Նախագահ Խաթեմի եւ վարչապետ Սորի ուսուցիչի մարզին մէջ գործակցութեան համաձայնագիրին կնքումէն ետք

կը մրցակցին Պանկեթեանի քարիւղի հանքին պեղումներու միլիոնաւոր տողները արժող գործարքին տիրանալու համար:

Իրան օրական իր չորս միլիոն տակաւ քարիւղի արտադրութիւնը հինգ տարուան ընթացքին հինգ միլիոն տակաւ հասցնելու համար պէտք ունի օտար ընկերութիւններու օժանդակութեան:

Փլթթոլիում՝ Այսօր ընկերութեան անօրէն ձէյ. Ռոպինսոն Ուէսթ կ'ըսէ. «Մեր վերլուծարանները գնահատած են, որ պատժամիջոցները պատճառ դարձած են, որ 1,5էն 2 միլիոն տակաւ յաւելեալ քարիւղի արտադրութեան կարողութիւնը վատնուի ներդրումներու չզոյնութեան պատճառով»:

«ՈՅԹԸԸ»

ՌՈՒՍԱՍՏԱՆ - ՉԻՆԱՍՏԱՆ - ԻՐԱՆԸ ԸՆԴԴԵՄ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ՝ ՓԱՔԻՍԱՆ - ՄԵՌՏԱԿԱՆ ԱՐԱՔԻԱՅԻ

Հոկտեմբերի 25ին Տուշանպէտում, ԱՊՀի պաշտպանութեան նախարարների համաժողովի շրջանակներում Ռուսաստանի պաշտպանութեան նախարար Իկոր Սերկէյեւը հանդիպեց Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ Խարապիին, որը պաշտօնական այցով Տաճիկիստանում էր: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են Աֆղանիստանում հակաթափափակաւ դաշինքին օժանդակելու հարցը: Իսկ մինչ այդ նրանք առանձին-առանձին հանդիպել էին Աֆղանիստանի պաշտօնական նախագահ Պուրհանտտին Ռապիսանիի ու ժողովրդի հրամանատար Ահմէտ Շահ Մասուտի հետ: Ինչպէս նշեցին մտկոլմեան մամուլի որոշ օրկաններ, Սերկէյեւը - Խարապիի հանդիպմանը Մասուտին յատկացուող Ռուսաստանի ռազմական օժանդակութիւնը Իրանի տարածքով Աֆղանիստան տեղափոխելու պայմանաւորութիւնն է ձեռք բերուել:

Թաիլիպաներ յիշեալ հանդիպումներին արձագանգեցին խիստ պայրոյթով, Մոսկուային նախապաշարուածով, որ եթէ վերջինս աջակցի Մասուտին, իրենք կը դիմեն համապատասխան քայլերի:

Հոկտեմբերի 31ին թաիլիպաները կրկին անդրադառնալով այդ հարցին՝ յայտարարել են, որ եղբայր իսլամական Փաքիստանի օժանդակութիւնն ստանալը (որից բազմակողմանի ստանում են) այլ բան է, այն չէս համեմատի անհաւատներից ստացուող օգնութեանը:

Իրանը վերջին շրջանում թէեւ թաիլիպաների հետ յարաբերութիւնները բարելաւելու որոշ քայլեր կատարել է, սակայն որպէս Աֆղանիստանի օրինական իշխանութիւն ճանաչում է Ռապիսանիի կառավարութեանը: Իսկ «Թաիլիպանին», այնուամենայնիւ, դիտում է իբրեւ սպառնալիք՝ ընդդէմ շրջանի կայունութեան եւ Իրանի սահմանների անվտանգութեան: Ինչ վերաբերում է «Թաիլիպանի» դէմ պայքարելու Ռուսաստանի յուրեւ մտադրութեանը, պայայն պատճառաբանում է նախ Միջին

Ասիայում, ապա Ռուսաստանի մահմեդական շրջաններում իսլամ արմատականութեան տարածման մտաւախութեամբ: Բացի այդ, այսօր արդէն կազմակերպ վեր է, որ չէչէն գրոհայիններից շատերը եւ նրանց շարքերում Ռուսաստանի դէմ կողմող արաբ եւ այլ ազգերի ներկայացուցիչները մարտնչում են թաիլիպանների ճամբարներում եւ նիւթական օժանդակութիւն ստանում՝ «Թաիլիպանի» հովանաւորութիւնը վայելող Ուսամա Պըն Լատիֆից:

Ինչպէս յայտնի է Աֆղանիստանի նախկին փոշոթու վարչապետ Կոլպետտին Հիքմէթարը եւ նրա «Իսլամական» կուսակցութիւնը, որոնց միջոցով իսլամապետը ձգտում էր Աֆղանիստանում իրականացնել իր նպատակները, 1994 թ. դառնալով թաիլիպանների առաջին յարձակումների թիրախը, Աֆղանիստանի ռազմաքաղաքական թատերաբեմում մղուեցին երկրորդ գիծ: Դա իրաւամբ պատճառաբանուեց 1993 թ. Նիւ Եորքում Համաշխարհային առեւտրի կենտրոնի պայթեցմամբ: Միացեալ Նահանգների հետաքննութիւնների արդիւնքներն ապացուցում էին, որ Հիքմէթարի ռազմական ճամբարներում մարտնչող շուրջ 100 արաբ-աֆղաններ մասնակից են եղել յիշեալ ահաբեկչական գործողութեանը, այն դէպքում, երբ խորհրդային զօրքերի դէմ պատերազմի ընթացքում Միացեալ Նահանգների արեւմտեան խորհրդային բաժինը Հիքմէթարին էր յատկացում: Ահա թէ ինչու Միացեալ Նահանգները «համահեղինակութեամբ» Փաքիստանում ձեւաւորուեց եւ Աֆղանիստանի ռազմաքաղաքական թատերաբեմի իջեցուեց փոշոթուական «Թաիլիպան» իջեցուեց, որը կոչուած էր Հիքմէթարին փոխարինել՝ Աֆղանիստանում պաշտպանելով Փաքիստանի շահերը:

1996 թուականին երբ թաիլիպաները գրաւեցին Քապուլը, Փաքիստանը, Մեդուական Արաբիան եւ Արաբական Միացեալ Ըմիրութիւնները վերջիններս անհաւանգեցին որպէս Աֆղանիստանի օրինական իշխանութիւն, Միացեալ Նահանգները եւս այդ ուղղութեամբ

որոշ քայլեր ձեռնարկեցին, սակայն «Թաիլիպանի» կողմից մարդու իրաւունքների ամենակոպիտ խախտումների փաստերը Ուաշինկթընին հարկադրեցին ձեռնարկ մնայ: Իսկ հետագայում, երբ թաիլիպաները հրաժարուեցին Ուսամա Պըն Լատիֆին, որին Ուաշինկթընը մեղադրում է 1998 թուականի Օգոստոսին Թանպահայում ու Քենիայում Միացեալ Նահանգների դեսպանութիւնների դէմ ահաբեկչութեանը մասնակցելու մէջ, յանձնել Միացեալ Նահանգներին, ստեղծուեց տպաւորութիւն, թէ «Թաիլիպան» - Ուաշինկթըն փոխարաբերութիւնները սրուել են, ինչը թերեւս լուրջ բնոյթ չի կրում: Աւելին, թում է, թէ Միացեալ Նահանգները դեռեւս խաղարկում են թաիլիպաների յաղթարարութեւ, այն կիրառելով իբրեւ ճշմարիտ յոյսերի դէմ Ռուսաստանի եւ Չինաստանի, յանուն Միջին Ասիայում իր ազդեցութեան տարածման եւ ՕԹԱՆԻ Արեւելք ընդարձակման, այլապէս Միացեալ Նահանգները կարող էին իր դաշնակիցների՝ Փաքիստանի եւ Մեդուական Արաբիայի միջոցով պայքի թաիլիպաներին: Միւս կողմից քանի որ Ռուսաստանը, Չինաստանը եւ Իրանը դէմ են Միացեալ Նահանգների յիշեալ նպատակների իրականացմանը, ուստի անհիմն չէն այն տեսակէտները, որոնց համաձայն հնարար է, որ ընդդէմ Միացեալ Նահանգներ - Փաքիստան - Մեդուական Արաբիա եռեակի ձեւաւորուի Ռուսաստան - Չինաստան - Իրան դաշինքը:

Այսուհանդերձ, պէտք չէ բացառել, որ եթէ հովանաւոր եռեակի աջակցութեամբ թաիլիպաները Աֆղանիստանում վերջնական յաղթանակ արձանագրեն, ինչի հաւանականութիւնը շատ փոքր է, ապա նրանք կը վերածուեն պուլմերականի եւ կը գործեն շրջանում Միացեալ Նահանգների շահերի դէմ: Դա են վկայում պըն Լատիֆը, որը ժամանակին սերտօրէն համագործակցել է Մի. Այ. Էյ. ի հետ եւ Հիքմէթարի դէպքերը:

ԼԻՄԱ ԲԵՂԱՉԱՆԵԱՆ, «ԱԿ»

ՆԵՐՇՆՉԵԼԻ ԱՐՏԱԾՈՒՄՆԵՐ

Տարբեր տարի առանձնաբար իրենց ինքնութիւնը եւ նորանկախ պետութիւնը ամրապնդելու փորձերը դարձնել է ետք, կեդրոնական Ասիոյ հինգ երկիրները՝ Ղազախստան, Խըրըզիստան, Տաճիկիստան, Թուրքմենիստան եւ Ուզբեկիստան սկսած են նկատելու, որ կարգ մը հարցեր պէտք է միասնաբար դիմադրուելին: Անոնցմէ մէկը Աֆղանիստանն է: Այդ երկիրը ոչ միայն սպառնալիք մըն է, որուն ներքին պատերազմը կրնայ տարածուիլ իր սահմաններէն անդին, այլեւ անոր աֆիոնի արտածումները սկսած են ինդոնազոնոյց դառնալ:

Աֆղանիստան, որ մեծ մասամբ կը գտնուի թաիլիպաններու հակակշիռին տակ, ներկայիս աշխարհի աֆիոնի 75 տո հարիւրը կ'արտադրէ: Աֆիոնին մեծամասնութիւնը կեդրոնական Ասիոյ եւ Ռուսիոյ ճամբով Արեւմտեան Եւրոպա կը հասնի:

Ամերիկեան կառավարութիւնը կը մեղադրէ թաիլիպանները: Մինչեւ 1990ականի կէսերը, երբ թաիլիպանները իշխանութեան հասան, աֆիոնը կը մշակուէր շուրջ 63 հազար քառ. քմ. տարածութեան վրայ: Իսկ թաիլիպաններու իշխանութեան հասնելէ ետք այդ տարածութիւնը հասաւ շուրջ 97 հազար քառ. քմ.ի:

Թմրեցուցիչի հարցին արմատը կը գտնուի երկրի տնտեսութեան մէջ, որ քայքայուած է 20 տարուան պատերազմներուն պատճառով (տարբեր տարի նախկին Խորհրդային Միութեան դէմ): Բազմաթիւ երկրատարաֆղաններ անգրագետ են: Քիչեր կրնան պրել եւ կարողալ: Անոնց մեծամասնութիւնը կը գրադի խաշաշի մշակումով: «Մենք չէինք ուզեր, որ այդ գիրքին մէջ ըլլայինք: Մենք պատրաստ ենք փոխուելու, սակայն պէտք է այլընտրանքային մշակութիւն» կ'ըսէ Նիւ Եորք մէջ թաիլիպաններու ներկայացուցիչ մը:

Ուզբեկիստանի մէջ անցեալ շաբաթ տեղի ունեցած միջազգային համագումար մը ընդգծեց, թէ տնտեսական տագնապի պատճառով հողագործներ ստիպուած խաշաշ կը ցանեն, իսկ երկրատարաֆղաներ միայն Աֆղանիստանի պարագային) կը քաջալերուին գիտութեամբ ծայրայեղական խմբակներու: Անոնցմէ ոմանք կը մասնակցին նաեւ թմրեցուցիչի առեւտրին: Համագումարը նշեց, որ կառավարութիւնները առանձնաբար չեն կրնար լուծել հարցը, այլ անոնք պէտք է միասնաբար աշխատին: ՄԱԿի պաշտօնատարի մը համաձայն, աֆիոնի մաքսանենդման ճամբաները արդէն լակելու գծով միասնական ջանքերու շնորհիւ՝ այս տարի նուազած է թաիլիպաններու՝ աֆիոնէն գոյացած եկամուտը:

ՄԱԿ փորձած է այլ տեսակի հունտեր արամադրել աֆղան հողագործներուն: Սակայն այդ աշխատանքը ամբողջութեամբ իրապործելու կը խոչընդոտեն պատերազմը եւ թաիլիպաններու հետ տկար յարաբերութիւնները:

Կեդրոնական Ասիոյ երկիրները ցարդ կեդրոնացած են օրէնքներու խիստ գործադրութեան վրայ: Ուզբեկիստանի օրէնքներուն համաձայն, թմրեցուցիչներու մաքսանենդները 15 տարի բանարկութեան կրնան դատապարտուել: Իսկ ոստիկանութիւնը քաղաքական «անրադձախ» տարբերու գրպաններուն մէջ թմրեցուցիչ կը դնէ:

«ՏԻ ԵՐՈՆՈՄՈՍ»

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԵՒ - ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ

ՅՈՒՇԱԼՊՈՄԻՄ ԵՐԵՒԱՆԻ ԱՆՆՈՒՆԱՑԱԾ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԹՈՒՐԲ ԵՐԵՒԱՆԵՐՈՒՆ ԶՈՒԱՐՃՈՒԹԻՒՆԸ

Գողտրիկ, յաւերժականօրէն պայծառ եւ ծովահարսի թարմութեամբ ժպտուն քաղաք մըն էր Սելանիկ: Կոկիկ, մաքուր, մանաւանդ ժրջան իր հայկականութեամբ:

Կը հասնինք Լեֆկոս Փերկոս: Սպիտակ աշտարակը: Սպիտակ... Թերեւս ժամանակին, երբ իթիթիհատի գերագոյն մարմինը տակաւին այնտեղ ժողով գուժարելով Եղեռնի ծրագիրը չէր մշակած:

Չենք գիտեր, արդեօք պատմութեան ամօթէն, թէ մեր անէծքներէն ու պոռթկումներէն սեւեռած էր այս աշտարակը:

Քաղաքին հողեւոր հովիւ հայր սուրբին հետ կը պտտինք մարմարաչէն մայթերով զարդարուած բուրաստանանման զրօսայիլի որուն ներդաշնակութիւնը, ժպիտն ու պայծառութիւնը կու գային խանդարել ամէն կողմ վիտապող լակտաները:

Յայտնի էր, որ թուրք էին բոլորն ալ:

Գետին մաքրողները, աղրահաւաքները, կօշիկ ներկողները, ձիւթ վաճառողները եւ մանաւանդ մուրացկանները:

Բացատրութեան կարիք չկար: Թուրքեր էին:

Ու թէն վեր, մինչեւ 16 տարեկան աղջիկներ ու մանչեր: Բուլիկ, ցնցոտիապաշտ, աղտոտ, լրանց ցեղին մշակոյթէն ստրկած հայհոյներու փոխանակումներով ուրախ կը մուրախին խաղալով, կը զուարճանային գողնալով եւ կը կուռուտէին իրենց հայրական բնազդով:

Մէկ առ մէկ կը դիտէինք զանոնք, անոնց տխրեղ մարմինները, ազգուն սրունքները: Անոնք որքան կը յիշեցունէին տէրգորեան սերունդը մեր ազգին, կտոր մը չոր հացի կարօտ, խոտի, ոսկորի փշուրի, նարինջի կեղեւի ցանկացող մեր մանուկները: Այդ սերունդին վերապրող, ազգութիւն վերակերտող սերունդին զաւակներս կը խոճայինք մեզ կոտորող թշուառական ազգին, թշուառ, մշտապէս անօթի այս լաճերուն վրայ:

Անոնցմէ մօտ տար տարեկան մանչ մը՝ Օսման, մօտեցաւ մեզի իր ներկարարի տուփով եւ աղաչանքով առաջարկեց չնչին գուժարի մը փոխարէն մեր կօշիկները ներկել:

Մինչ թուրք Օսմանը մեր կօշիկները կը ներկէր, մենք հայր սուրբին հետ աչքերով, մտածումներով, մեր պատմութեան դաժան էջերուն հասած, ուրախ եւ միթխարուկան տրամադրութեամբ մեր մանուկները կը բաղդատէինք փողոցները թափուած այս արարածներուն հետ:

Իր աշխատանքը աւարտած, սեւեռած մատներով արախմիները գրեթէ յափշտակելով եւ հիւանդոտ աչքերէն արցունք հոսեցնող, արեւին մօր օթեր պորտին գոյնզգոյն հայհոյները ուղղելով՝ թուրք լաճը հեռացաւ մեզմէ:

Անոր յաջորդեց Այշէն: 12 տարեկան թուրք աղջնակ մը մօտեցաւ մեզի եւ ինքզինք ներկայացուց համարձակօրէն: Օսմանին քոյրն էր: Եղբայրը մեր կօշիկները ներկած էր, ինք եկած էր մուրալու:

Մօտեցաւ հայր սուրբին եւ անոր փակեղին նայելով հարցուց.

- Ի՞նչ ես դուն, ինչո՞ւ այդ գլխարկը դրած ես:

- Ես կրօնի մարդ եմ, եղաւ հայր սուրբին պատասխանը:

Թուրք աղջիկը մեր խօսակցութեան թէ ընտանեկան թեթեւութեամբ՝ շարունակեց իր հարցապնդումը:

- Լա՛ւ, բայց ի՞նչ միլիթի կրօնաւոր ես: մուսուլմաններո՞ւն ճամին կ'երթաս, թէ եունաններուն:

- Ես երմէնի միլիթի եմ, մենք մեր հայկական եկեղեցին ունինք: Դուն գիտե՞ս հայերու մասին. լսած ես մեր անունը:

Այշէն, որ մինչ այդ ամէն ինչ ընչապակեան անընդունակ կ'առնէր, փորձեց լրջանալ եւ պատմեց. թէ ինչպէս, յաճախ իր մեծ հօրմէն, իր պատկանած ցեղախումբի անդամներէն հազարումէկ պատմութիւններ լսած էր հայերու մասին: Եւ վարկեան մը կանգ առնելէ ետք, երկու քայլ հեռացաւ մեզմէ, գարմանալի համարձակութիւնը ունեցաւ մեր երեսն ի վեր ցեղին յատուկ շնականութեամբ յայտարարելու:

- Բայց մերինները կը պատմեն նաեւ, որ շատ տարիներ առաջ ձեզ ջարդած, վերջացուցած են: Կը պատմեն, թէ ք.օ.բ.ի.ի.ի.ի. չորրորդ տարի, ք.օ.բ.ի.ի.ի.ի. թուրքերը, վերջացուցինք հայերը, վերջացուցինք...:

Եւ իր մանկական ամբողջ միտքը լեցուցած մեր կոտորածներու պատմութեամբ, ահաւոր դէպքերէն մէկը արարքի վերածելով՝ աշխատեցաւ

ցոյց տալ պատկեր մը: Ծունկի եկաւ, ձախ ձեռքը ձախ ծունկին դրաւ եւ աչքը դանակի վերածելով՝ գոհունակութեամբ բըքեց:

- Պիգ, սիգը պիտոյի քեպքը, պիթրիսիք (ձեզ այդպէս մորթեցինք, վերջացուցինք)...

Եւ ձայնին մէջ փորձեց դնել տակաւին հարցում մը, «Մենք ձեզ կոտորեցինք, որ վերջանաք, ինչո՞ւ չվերջացաք, ինչո՞ւ տարիներ յետոյ, այսպէս պիտի կենաք դուք ողորմութիւն տուող եւ մենք ողորմելի»:

Այս մտածումը ի՞ր, թէ մեր միտքը կը ճանկէր, չէինք զիտեր:

Չարունակեց: Մեր աչքերուն մէջ կարդալով բարդացող գայրոյթը, քայլ մը նահանջեց, բարձրաձայն ծիծաղելով եւ իր ճապուղի ոտքերով փախուստ տուաւ եղբոր մօտ, անոր պատմելու զարմացած, թէ մեռած, վերջացած հայեր էին ներկած կօշիկներուն տէրերը, թէ անոնց տուած տրախմիներով էր, որ այդ օրը կուշտ հաց մը պիտի ուտէին:

Մենք ջանացինք կանչել մուրացիկ Այշէն, կանչել եւ խօսիլ իրեն հետ: Բացատրել իրեն, որ մենք այսօր ոչ միայն ընտանեկան չենք, այլ կ'ապրինք ամէն տեղ, ամէն օր, կ'ապրինք հպարտութեամբ, մուրացկան զաւակներ չունինք: Կ'ուզէինք պատմել, թէ այն նախնիքին օրերուն աղքատ էինք, ներկարար էինք, բայց այդ օրերը անցած են հիմա: Այսօր մեր անուշիկ աղջիկները, մեր կայտառ մանուկները լոյսով կը մեծանան, ապագայի վառ յոյսերով կը զինուին:

Չկրցանք հասնիլ թուրք Այշէնին ետեւէն: Բայց դժուար չէր բոշաներուն վրանաքաղաքը գտնել՝ Սելանիկ քաղաքի հեռաւոր դաշտերուն մէջ: Երկրորդ օրն իսկ որոշեցինք Այշէնին ցեղախումբին այցելութիւն մը տալ:

Անոնց ծանօթ հին սերունդի յոյներ մեզի բացատրեցին, թէ անոնք շատ մոլեռանդ եւ բրիտանեատեաց թուրքեր են, որոնք մեծ «աշխուժութեամբ» իրենց մասնակցութիւնը բերած են հայկական կոտորածներուն: Մեր արիւնով ու հարստութեամբ միշտ աղքատ, տակաւին ցեղով, պապ ու թոռներով մուրացկան, անոնք մինչեւ քանի մը տարի առաջ քաղաք կը բերէին ձեռագործներ, պղինձէ, արծաթէ գործեր, մազադաթներ:

Կ'ուզէինք այս փերը ինկած, մեր աւարը իրենց հետ բերած ժողովուրդին ծանօթանալ մտերիմ թշուառութեան մէջ:

Կ'ուզէինք երթալ եւ մեր աչքերով տեսնել մեզ ջարդողներուն թշուառականներու անասնական կենցաղը:

Կ'ուզէինք անոնց պատմել մեր Հայաստանի եւ հայրենիքի մասին:

Չեղաւ: Չկրցանք: Մինչ այդ արդէն թուրք Այշէն անհետացած էր ամբողջով մէջ, բայց մինչեւ այսօր զարմացական վճիռը կը հնչէ ականջներուն մէջ:

- Ամմա պիգ սիգը քեպքը, պիթրիսիք...

ԱՐԱՆ ՏՈՆՈՅԵԱՆ

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ «ԿԱՊՈՅՏ ԳԻՐՔ»-Ի ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄԸ ԼՈՅՍ ԿԸ ՍՓՈՒՅ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

1916ին Բրիտանիոյ կառավարութիւնը հրատարակեց «Կապոյտ գիրք» մը, ուր 1915-1916ի դէպքերը բնորոշուեցան իրեն հայ ժողովուրդին ոչնչացման համար ծրագրուած ճիգեր: «Կապոյտ գիրք»ը Հայկական Յեղասպանութեան մասին ամէնէն անվիճելի ու ազդեցիկ աղբյուրներէն մէկն է: Ներկայիս «Կոմիտաս» հիմնադրի կողմէ լոյս տեսած է անոր խմբագրման ու ամբողջական հրատարակութիւնը, խմբագրութեամբ Արա Սարաֆեանի, որ նաեւ գրած է անոր ներածականը:

Վիքտորիան ձեռնարկը պատմութիւնը «Կապոյտ գիրք»ին, որ նախապէս ճանչցուած էր իբրեւ «Օսմանեան կայսրութեան մէջ հայերուն նկատմամբ վերաբերումը, 1915-1916» անունով: Ա. Թոնյակի զգուշութեամբ դասաւորած եւ ստուգած է Օսմանեան կայսրութեան տարբեր ընթացքներէ հաւաքուած տասնեակներով ակնատեսի վկայութիւնները, որոնք հիմք ծառայած են Հայկական Յեղասպանութեան մասին վ. Պրայսի կատարած բացառիկ ուսումնասիրութեան, որ հրատարակուեցաւ, երբ տակաւին ոճիրը ընթացքի մէջ էր:

Գիրքը կը պարունակէ Միացեալ Նահանգներու դեսպանին եւ միտնոնթերներու ակնատեսի տեղեկագրութիւնները, ինչպէս նաեւ՝ գերմանացի, իտալացի, դանիացի, շուէտացի, նորվեգիացի, յոյն, քերտ եւ հայ ակնատեսներու վկայութիւնները:

Գիրքին սկզբնական հրատարակութեան մէջ կային բացթողումներ. բացթողում մարդոց եւ վայրերու անունները նշուած չէին՝ Օսմանեան կայսրութեան մէջ ապրող վկաներուն անվտանգութիւնը ապահովելու համար: Նոր հրատարակութեան մէջ Ա. Սարաֆեան ներառած է այդ անունները:

Ներածականին մէջ Ա. Սարաֆեան արծարծած է թուրք ազգայնական զբաղեցնող շարունակական յատարարութիւնները, թէ «Կապոյտ գիրք»ը բրիտանական քարոզչութեան մէկ կողմնակիցն է: Ան փաստերով ներկայացուցած է գործին կազմութեան մտաւորական աշխատանքներուն ամբողջութիւնը: Ան ցոյց տուած է, թէ ինչպէս վկայութիւնները հաւաքուած, վաւերացուած եւ ներառուած են գիրքին մէջ:

Ան հաստատած է, թէ տեղեկագիրները հաւաքողները վերապահ մտեցում ցուցաբերած են աղբյուրներուն վաւերականութեան անընդունակութեամբ:

Լոնտոնի «Թայմ» Լիթրթրի Սափուրնթ» թերթին համաձայն, «Այս գործը Արա Սարաֆեանի հետախուզութեան շնորհիւ կը ներկայանայ իբրեւ բարձրորակ վաւերագրութիւն մը... Սարաֆեան համոզուել կը ստիպուի իր ջրէ այն յայտարարութիւնները, որոնք վերջ կողծիք եւ բրիտանական միակողմանի քարոզչութիւն կը նկատեն»:

Բրիտանիոյ Լորտերու Տան անդամ Լորտ Աւիպըրի ողջունած է «Կապոյտ գիրք»ին այս ամբողջական հրատարակութիւնը: Դատաւարտելով «Ակնբեւ կերպով փաստի չզոյրութեան պատճառով» Հայկական Յեղասպանութեան ճանաչումը մերժող բրիտանական ներկայ կառավարութիւնը՝ Լորտ Աւիպըրի նշած է, է «Բրիտանիոյ արտաքին գործոց նախարարութիւնը 1916ին ինք հրատարակած է այդպիսի փաստ մը... Պէտք է դրուատել Արա Սարաֆեանը՝ Օսմանեան կայսրութեան մէջ հայերուն նկատմամբ վերաբերումը, 1915-1916» գործը հանրութեան մատչելի դարձնելու համար:

Թոնյակի, որ իր կարգին մեծ պատմարան մըն է, խորապէս ցնցուած էր Հայկական Յեղասպանութիւնը ուսումնասիրած ժամանակ: 1967ին հրատարակած «Մասիս»-ը իր կարգին մեծ պատմարան մըն է, խորապէս ցնցուած էր Հայկական Յեղասպանութեան մասին: Որեւէ մեծ ոճիր, ըլլայ անհատական թէ հանրային, անձնական թէ ոչ անձնական, կը յարուցէ այնպիսի հարցեր, որոնք կ'անդամանցնին ազգային սահմանները. հարցը կ'ուղղուի դէպի նոյնիսկ մարդկային բնութեան սիրտը: 1915ին թուրքերի մէջ զորացրուած Յեղասպանութեան մասին իմ կատարած ուսումնասիրութիւնս ինձի վերադարձեց Սկզբնական Մեղքի իրականութիւնը, եղբակցուց թոնյակի:

«Օսմանեան կայսրութեան մէջ հայերուն նկատմամբ վերաբերումը, 1915-1916»-ի հրատարակութիւնը կ'ամբողջացնէ «Կոմիտաս» հիմնարկի «Հայկական ցեղասպանութեան վաւերագրութիւն» շարքը, որ մինչեւ օրս կը բաղկանայ ակնատեսի տեղեկութիւններու չորս հատորներէ՝ «Հայաստանի մէջ ողբերգական օրեր» (վեր. Հէնտի Ռիկզ, Հարփութ), «Թրքական զազանութիւններ» (ձեռնարկ Պարթևի կողմէ խմբագրուած քսան մէկ տեղեկագիրներ), «Մարտի 1915» (Պերթա Մորլի յուշատետք) եւ «Գերմանացիներ, թուրք եւ աստանական կազմեցիկ եռեակ զաշնակցութիւն մը» (Թէյսի Էթթինսընի յուշատետք, Հարփութ):

«Կապոյտ գիրք»ին առանց գրաքննութեան հրատարակումը հովանաւորուած էր տոքթ. Ռոստոմ Տէր Ստեփանեանի եւ Հայկական Յեղասպանութեան ճանաչման յանձնախումբին կողմէ:

Գիրքը բաղկացած է xvi+677 էջէ եւ կ'արժէ 50 տոլար: Ստանալու համար կարելի է դիմել «Կոմիտաս» հիմնարկ. (www.gomidas.org):

ՔՈՒԼԻՍՆԵՐՈՒ ԵՏԻՆ

Ի՞նչ պատճենացաւ, ի՞նչպէս պատահեցաւ, ինչո՞ւ համար Քլինթըն մետասաներով պահուեց անամակ մը յոյց ներկայացուցիչներու Տան նախագահ Տեյնիս Հասթըթի մէջ էր այս ծրագիրին ետին կանգնող ուղիղը:

Եկէք քիչ մը ետ երթանք, բանանք մեր թղթածրարները եւ ձեռք տեղեկացնենք, թէ ի՞նչ գտած ենք:

Ուաշինկթընի մէջ նք եւ հեռու բանակցութիւններ կ'ունենանք հրեական լոպիսիսիէն ԱՅ. Փի. Է. Սի. ձիւսա, Պանի Պրիք եւ Է. Տի. ԱՅ. խմբագրութեան հետ, իսկ Է. Սի. ԱՅ. խմբագրութեան հետ: Խմբագրութիւնները մեզի հարց կու տան, թէ ի՞նչ տեղի կ'ունենայ Պատգամը, որ իրենց կը փորձենք փոխանցել, հետեւելու է «Բանաձեւին ընդունումը շատ ժխտական անդրադարձ պիտի ունենայ ոչ միայն իրենց եւ ամերիկեան, այլ նաեւ թուրք եւ իսրայէլեան ռազմավարական յարաբերութիւններուն վրայ:

Թուրքոյ մէջ հրեական լոպիսիսի ներկայացուցիչներու Տունը եւ Միացեալ Նահանգներու վարչակազմը կ'ողողէր բանաձեւին ընթացքի կասեցումը պահանջող նամակներով: Պետութեան պաշտօնական մարմիններուն կողքին, թուրքոյ իսլամ հրեայ եւ հայ քաղաքացիները կ'ընէին իրենց կարելին:

Ուաշինկթընի մէջ մեր դեսպանը, որ կ'աշխատէ իր ինը հօդանոց (ամբողջ թիւ մը) խմբակին հետ, գերմարդկային ճիգ կը թափէր: Ամերիկայի մէջ թրքական միտնոնթերները կ'ընէին իրենց կարելին:

Ուրեմն ո՞վ միջամտեց,

որպէսզի այս պատգամը հասնի Քլինթընի, եւ Հասթըթը ստանայ իր վերջին ազդարարութիւնը: Ո՞վ էր այս անձը:

Երբ այս բոլորը կը կատարուէր եւ ամէն մարդ շնչակտուր կը սպասէր, Քլինթըն եղբայրսին մէջ շատ զրաղած էր: Ան կը փորձէր Միջին Արեւելքի մէջ հաւանական պատերազմի մը առաջը առնել: Ժամանակը շատ արագ կ'անցնէր: Ճիշդ այս պահուեց էր, որ իսրայէլի մէջ որոշ անձի մը հեռաձայնը հնչեց: Հեռաձայնողը հրեայ թուրք մըն էր, որ կը խօսէր Պոլիսէն: Ան շատ յստակօրէն իսրայէլացի իր խօսակիցին պարզեց կայսրութիւնը եւ անոր հաւանական հետեւանքները՝ ըսելով, որ հրամայական պէտք է նկատէ իր միջամտութիւնը:

Իսրայէլացիին, որ յարգուած անձնաւորութիւն մըն էր, այս լսելով ըսաւ. «Ես չեմ ճիգ թափեցի իսրայէլացիներուն եւ ազդեատիւցիներուն միջև: Արդարեւ, ան հայերուն խոստում մը տուած էր եւ հարկ էր, որ դուրս գար այս նեղ վիճակէն՝ առանց ինքնիքին վնասելու: Վերջապէս, ան վարչական ձեւով մը զիստեղեկացնէ կայսրութեան մասին, պիտի չձեռնարկեմ քու խոստումներդ»:

Իստող Անը Շիմոն Փեռէսն էր: Ան անմիջապէս ծրագրի մը կազմեց եւ միջամտեց:

Հարցը փոխանցուեցաւ նախագահ Քլինթընի: Այդ Չորեքշաբթի Քլինթըն անամակ մը զրեց եւ ուղարկեց Հասթըթի: Միաժամանակ Հասթըթի փոխանցուեցան բանակի սպայակոյտի պետին՝ Շիլթընի ու արտաքին գործոց եւ պաշտպանութեան նախարարներու՝ Օլպրայթի եւ Քոնչէնի տեսակէտները:

ՍԵՏԱԾ ՍԵՐԹՕՎԼՈՒ

Շար.ը՝ էջ 10

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր



«ՎԱՅՄՐՈՅ» ԲԱՍՏԱԿԻ

ՄՐՅԱՇԱՐՔԸ ԿԸ ՍԿՍԻ ՎԱՂԸ

Լիբանանի ֆուտբոլի ֆեդերատիվը, իր հերթական ժողովին ընթացքին վաերացնել է ետք Լիբանանի ֆուտբոլի գերբաժնի մրցումին արդիւնքը (Լիբանանի ֆուտբոլի ֆեդերատիվը 2-0 արդիւնքով պարտութեան մատնած էր բաժակակիր Շապապ Սահէլը), կապուց յատուկ յանձնախումբ մը, որուն պարտականութիւնը պիտի ըլլայ ընտրել 2000ի «Վայսրոյ» բաժակի մրցաշարքին լաւագոյն ֆուտբոլիստը:

13 հոգիւնց յանձնախումբին մաս կը կապուէ Հ. Մ. Բ. Մ. Ի. նախկին մարզիկներէն Յովհաննէս Յուսէֆը (Ճոքի):

«Վայսրոյ» բաժակի մրցաշարքը, որ կը սկսի վաղը՝ Հինգշաբթի, Ախա Ահլի Ալէյ - Անսար մրցումով, տեղի կ'ունենայ Պէյրութի Քաղաքապետարանի դաշտին վրայ, մնացեալ բոլոր մրցումներուն նման:

Ստորեւ՝ Ա. հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

- ՀԻՆԳՇԱԲԹԻ, 9 ՆՈՅԵՄԲԵՐ
- Ախա Ահլի Ալէյ - Անսար (ժամը 6:00ին)
- ՈՒՐԱՍԻ, 10 ՆՈՅԵՄԲԵՐ
- Թատման Սուր - Նըժմէ (ժամը 6:00ին)
- ՇԱԲԱԹ, 11 ՆՈՅԵՄԲԵՐ
- Սաֆա - Անսար (ժամը 6:00ին)
- ԿԻՐԱԿԻ, 12 ՆՈՅԵՄԲԵՐ
- Շապապ Սահէլ - Նըժմէ (ժամը 3:00ին)
- ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 13 ՆՈՅԵՄԲԵՐ
- Սաֆա - Ախա Ահլի Ալէյ (ժամը 6:00ին)
- ԵՐԵՔՆԵՐԹԻ, 14 ՆՈՅԵՄԲԵՐ
- Շապապ Սահէլ - Թատման Սուր (ժամը 6:00ին)

ԵՈՒ. Է. ԷՏ. Ա.Ի ՄՐՅԱՇԱՐՔ

Եու. Է. ԷՖ. Ա. Ի ֆուտբոլի բաժակի մրցաշարքին Բ. հանգրուանի դարձի մրցումներուն երէկ գիշեր տեղի ունեցան չորս ճակատումներ եւ որոնց արդիւնքներն յայտնուեցան հետեւեւեցողներէն (Գերմանիա, Սուիտս, Սուիտս, Սուիտս) եւ ԱԷՔ Աթէնք (Յունաստան) ապահովեցին Գ. հանգրուանի մրցումներուն իրենց տոմսերը:

1860 Միւնիխ յաջողեցաւ Հայմըստէն (Շուէտ) երթին իր կրած պարտութեան (3-2) վրէժը լուծել եւ 3-1 արգիւնքով յաղթանակ մը արձանագրելով ինք ըլլալ Գ. հանգրուանին հասնող խումբը: Մարթին Մաքս (6րդ եւ 84րդ) եւ Փոլ Ակոսթիս (45րդ) նշանակեցին գերմանական կապիտան կողմէ:

ԱԷՔ Աթէնք հակառակ անոր, որ 2-1 արդիւնքով պարտութեան մը կրեց Հերթիլէն (Գանիա), սակայն երթին Յունաստանի մէջ 5-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրած ըլլալով, կացութենէն բան մը փոխուած չըլլաւ:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները (փակագծի մէջ նշուած են երթի մրցումներուն արդիւնքները, իսկ գլխագիրով նշուած խումբերը կ'անցնին Գ. հանգրուան):

- Ամիքս Վրոնքի (Լեհաստան) -
- ՀԵՐԹՍ ՊԵՐԼԻՆ (Գերմանիա) 1-1 (1-3)
- 1860 ՄԻՒՆԻՒՄ (Գերմանիա) -
- Հայմըստ (Շուէտ) 3-1 (2-3)
- Ռափիտ Վիեննա (Աւստրիա) -
- ՕՍԻՅԷԲ (Խորուաթիա) 0-2 (1-2)
- Հերթիլէն (Գանիա) -
- ԱԷՔ ԱԹԷՆՔ (Յունաստան) 2-1 (0-5)
- Բ. ՀԱՆԳՐՈՒՄԻՆԻ դարձի մնացեալ մրցումները (թիւով 20), որոնք տեղի պիտի ունենան վաղը, կարգ մը խումբերու համար պիտի ըլլան ճակատագրական, որովհետեւ անոնք երթին պարտութիւններ կրած են:
- Սելթա Վիկո, Ալաքս Անսթերամ եւ Շթուփկարթ, որոնք երթին օտար դաշտերու վրայ պարտութիւններ կրած էին, անպայման յաղթանակի պէտք ունին մրցաշարքին դուրս չնստալու համար:

Ստորեւ՝ վաղը տեղի ունենալիք մրցումներուն յայտագիրը (փակագծի մէջ նշուած են երթի մրցումներուն արդիւնքները).

- Կէնք (Պելճիք) -
- Վերտըր Պրեմըն (Գերմանիա) (1-4)
- Վիթէս Արնհէմ (Հոլանտա) -
- Ինթեր Միլան (Իտալիա) (0-0)
- Սելթա Վիկո (Սպանիա) -
- «Կարմիր Աստղ» Պելկրատ (Եուկրայնիա) (0-1)
- Սլաւիա Փրակա (Չեխիա) -
- ՕՅԻ Քրեթէ (Յունաստան) (2-2)
- Ֆէյխնուրտ Ռոթթերամ (Հոլանտա) -
- Պարսի (Չուիցերիա) (2-1)
- Տինամո Չաղրէպ (Խորուաթիա) -
- Փարմա (Իտալիա) (0-2)
- Կրաց (Աւստրիա) -
- Էսփանիոլ (Սպանիա) (0-4)
- Սլովան Լիպեցէ (Չեխիա) -
- Լիվըրպոլ (Անգլիա) (0-1)
- Ալաքս Անսթերամ (Հոլանտա) -
- Լոպս Սփոր (Չուիցերիա) (0-1)
- Փորթո (Փորթուգալ) -
- Վիսլա Քրաքով (Լեհաստան) (0-0)
- Շթուփկարթ (Գերմանիա) -
- Թիրոլ Ինսպրուք (Աւստրիա) (0-1)
- ՓԱՍՔ Սալոնիքս (Յունաստան) -
- Ուտինէպ (Իտալիա) (0-0)
- Վիպրով (Գանիա) -
- Ռայօ Վայքըանօ (Սպանիա) (0-1)
- Պուտափէշթ (Հունգարիա) -
- Նանք (Ճրանսա) (1-2)
- Ա. Էս. Ռոմա (Իտալիա) -
- Պուտափէշթ (Փորթուգալ) (1-0)
- Սելթիք (Սկոտլանդ) -
- Պորտո (Ճրանսա) (1-1)
- Քայլերպարտ (Գերմանիա) -
- Իրաքի Սալոնիքս (Յունաստան) (3-1)
- Ինթեր Պրաթիպալա (Սլովակիա) -
- Լոքոմոթիվ Մոսկուա (Ռուսիա) (0-1)
- Սէնք Կալըն (Չուիցերիա) -
- Ֆ. Ք. Պրիմ (Պելճիք) (1-2)
- Սլաւէս (Սպանիա) -
- Լիվըքոն (Նորվեգիա) (3-1)

«ՉԵՄՓԻՐԵՆՉ ԼԻԿ»

ԼԻՈՆ ԱՆՑԱԲ ՅԱԶՈՐԴ ՇԱՆԳՐՈՒՄ

«Չեմփիրենչ Լիկ»-ի ֆուտբոլի մրցաշարքի գծով, երկ տեղի ունեցան Ա. հանգրուանի վերջին մրցումները՝ Ա. Բ. և Գ. խմբակներին ներս եւ այսպիսով յաւակացան Բ. հանգրուանի հասնող ութը խումբերը: Այսօրուան մրցումներին ետք, Ե., Զ., Բ. և Գ. խմբակներին ներս եւ այսպիսով յաւակացան Բ. հանգրուանի հասնող ութը խումբերը: Այսօրուան մրցումներին ետք, Ե., Զ., Բ. և Գ. խմբակներին ներս (տեսնել՝ ստորեւ) տեղի ունենան մրցումներն ետք խումբերուն թիւը կը բարձրանայ 16ի:

Սակայն նախքան մասնա մասնութիւնները, հարկ է նշել, որ իւրաքանչիւր խմբակի կրորդ դիրքը գրաւող կապուց կը մասնագրի Եու. Է. ԷՖ. Ա. Ի բաժակի մրցաշարքին:

Նախքան երկուտան տեղի ունեցած մրցումները, արդէն իսկ Բ. հանգրուանի իրենց տոմսերը ապահոված էին՝ Ռէալ Մատրիտ, Սպարտակ Մոսկուա (Ա. խմբակ), Արսենալ, Լացիօ Ռոմա (Բ. խմբակ) եւ Վալենսիա (Գ. խմբակ): Անոնց կեան միանալու Լիոն (Գ. խմբակ), Շթուրմ Կրաց եւ Կալաթասարայ (Գ. խմբակ):

Վերոյիշեալ չորս խմբակներուն մաս կապուց մոլ 16 խումբերն ալ Ա. հանգրուանի իրենց մրցումները ապահովեցին պարտութիւններով: Սփորթին Լիգան սակայն մրցաշարքին դուրս մնաց առանց յաղթանակ մը արձանագրելու:

Ռէալ Մատրիտ եւ Արսենալ, որոնք ապահոված էին իրենց տոմսերը, երկ կրեցին իրենց պարտութիւնները: Սպանիական կապուց 1 - 0 արդիւնքով պարտուած հեռացաւ Սպարտակ Մոսկուայի դաշտին, իսկ անգլիական կապուց 3 - 0 արդիւնքով պարտուած՝ Շախթար Տոնիթսը դաշտէն:

Մոսկուայի մէջ տեղի ունեցած մրցումին, որուն ներկայ էին 77 հազար համակիր, Ռէալի մարզիկ ժերմի Նիլթով 47րդ վայրկեանին իր բերդին ներս կոլ մը նշանակելով, պատճառ դարձաւ իր կապուցին մրցաշարքին առաջին պարտութեան:

Լիոնի մէջ տեղի ունեցած մրցումին հիւրընկալ կապուց 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնել է ետք Օլիմպիքսը, ինք եղաւ անոր փոխարէն իր տոմսը ապահովողը: Փիեռ Լիկը նշանակեց ֆրանսական կապուցին կոլը (2րդ):

50 հազար համակիրներու ներկայութեան տեղի ունեցած Ռէյնըրկ - Մոնաքո մրցումը (2 - 2) եղաւ ի վնաս երկուքին, որովհետեւ անոնք երկուքն ալ դուրս մնացին մրցաշարքին, նկատել ունենալով, որ նոյն խմբակին ներս տեղի ունեցած երկրորդ մրցումն ալ կալաթասարայի եւ Շթուրմ Կրացի միջև վերջ գտաւ նոյն արդիւնքով, դասաւորման պատկերը մնաց անփոփոխ, հետեւաբար Շթուրմ Կրաց եւ Կալաթասարայ իրենք եղան Բ. հանգրուանի անցնողը:

ԱՅՍՈՐՈՒՄ ԱՐՏՈՒՄՆԵՐԸ

Ա. հանգրուանի վերջին հանգրուանի մրցումները, որոնք տեղի պիտի ունենան այսօր, Ե., Զ., Բ. և Գ. խմբակներին ներս, պիտի ըլլան հետաքրքրական եւ ճակատագրական բացի՝ Զ. խմբակին, նկատել ունենալով, որ հոն արդէն իսկ Բ. հանգրուանի հասնող խումբերը յաւակացած են: Անոնք են. Պալերմ, Միլանի եւ Փարիզ Սեն Ժերմէն:

Ստորեւ՝ այսօր տեղի ունենալիք մրցումներուն առնչուած ամփոփ տեղեկութիւններ:

Ե. խմբակին, պարագրուի դիրքը գրաւող Տեփորթիօ Քորուան իր կին իսկ ապահոված է իր տոմսը: Հետեւաբար երկրորդ

տոմսին համար պարագրու պիտի ըլլայ Եուկրայնի (2րդ), Փանաթինայքոսի (3րդ) եւ Համպուրկի (4րդ) միջև:

Նոյնիսկ Համպուրկ յոյս ունի հասնելու Բ. հանգրուան, անշուշտ եթէ յաջողի պարտութեան մատնել իր հիւրը՝ Տեփորթիօ Քորուան: Սակայն միեւնոյն ժամանակ Յունաստանի մէջ տեղի ունենալիք մրցումը՝ Փանաթինայքոսի եւ Եուկրայնի միջև պիտի վերջ գտնէ հաւասարութեամբ:

Սակայն այս մէկը չի նշանակեր, որ Փանաթինայքոսի եւ Եուկրայնի միջև անաւարտ պիտի նստին, ալ պիտի փորձեն իրենց կարգին յաղթանակ արձանագրել:

Հարցը փակուած պիտի համարուի եթէ վերոյիշեալ ճակատումը վերջ գտնէ, հաւասարութեամբ, անշուշտ եթէ Տեփորթիօ Քորուան պարտութեան մատնէ, Համպուրկը: Այս պարագային իտալական կապուց ինք է, որ պիտի անցնի Բ. հանգրուան:

Զ. խմբակին ներս տեղի ունենալիք մրցումները պարագային պիտի ըլլան բարեկամական, որ անաշուշտ է. Պալերմ Միլանիսի հիւրը պիտի ըլլալ Ռոմայի պարիկ. իսկ Փարիզ Սեն Ժերմէն՝ Հելսինգորկի: Երկու հիւր կապուցն ալ ապահոված են իրենց տոմսերը:

Է. խմբակին կացութիւնը բոլորովին տարբեր է, թեւ վերջին դիրքը «գրաւող» Տինամո Քիւն, որ Մանչեսթըր Ենֆիլթի տի հիւրը պիտի ըլլայ, ար-

դէն իսկ կորսնցուցած է Բ. հանգրուանի հասնելու իր յոյսը:

Անգլիական կապուցին նման պիտի փորձեն յաղթանակ մը արձանագրել նաեւ Փ. Ս. Վ. Անտոնովը եւ Անտոնով, որոնք պիտի ճակատին իրարու դիմ, առաջինին դաշտին վրայ:

Մարիչ Ալեքս Ֆերլըսընի կապուց պիտի փորձէ, դժուարութիւններու չմատնուիլ, որովհետեւ առաջին հերթին անոր կապուցին պիտի բացակային Փոլ Սքոլզ (կախակայուած), Եափ Սթիւ եւ Եափըր Պրոմքվիտ (վիրաւոր):


Բ. խմբակին պարագրուի դիրքը գրաւող Ա. Սի. Միլան արդէն իսկ ապահոված է Բ. հանգրուանի իր տոմսը, հետեւաբար Լիօնի դիմ տեղի ունենալիք մրցումը անոր համար ոչ մէկ կարևորութիւն կը ներկայացնէ:

Անգլիական կապուց ապահովութեան պէտք ունի, որպէսզի մրցաշարքին դուրս չմնայ: Պարտութիւն մը «Սան Սիթո»-ի մէջ եւ յաղթանակ մը «Նուքսթըմ»-ի մէջ, մրցաշարքին դուրս պիտի ձգէ Լիօն, որովհետեւ անիկա իր աղկրած պարտութեամբ պիտի նահանջէ կրորդ դիրք, իսկ Պարսա՝ պիտի գրաւէ երկրորդ դիրքը:

Վերջին դիրքը գրաւող Պեշիքթաշ, որ Պարսելոնայի հիւրը պիտի ըլլայ, դաշտ պիտի ներկայանայ առանց Փարսա Նուվալի (կախակայուած) - մինչ սպանական կապուց չունի կախակայուած մարզիկ:

ՊԱՍՔԵԹՊՈՒԼ ԷՆ, ՊԻ. ԷՅ.

ՄԷՃԻՔ ԼԱԻ ԸՆԹԱՅՔԻ ՄԷՁ



Թրէյսի Մաքկրէյտի (Օրլանտո ՄէՃիք) Սուվերսոնի դէմ տեղի ունեցած մրցումին կը նշանակէ կողով մը:

Էն. Պի. Է. Քի երկուտան մրցումներուն Օրլանտո ՄէՃիք արձանագրեց իր 3րդ յաղթանակը, 110 - 99 արդիւնքով պարտութեան մատնել է ետք Միչիքը Սուվերսոնիքսը, որ այսպիսով կրեց իր երրորդ պարտութիւնը: Օրլանտո կրած է երկու պարտութիւն:

Օրլանտոյն վերադարձած էր Թրէյսի Մաքկրէյտի, որ մէկ մրցումով կախակայուած էր: Անոր վերադարձով, Օրլանտո յաղթանակ մը արձանագրեց, որովհետեւ ան նշանակեց 31 կէտ, մինչ մրցակից կապուցին մարզիկներն Ռիչըրտ Լուիս նշանակեց 28 կէտ, իսկ անոր խմբակից Կերի Փէյթընը՝ 23 կէտ:

Ետք մէկ արձանագրեց եղանակի իր չորրորդ յաղթանակը, 98 - 92 արդիւնքով պարտութեան մատնել է ետք Միչեսթըս Վուլվըր: Քարլ Մարտ (ձեյ) նշանակեց 22 կէտ եւ կատարեց 15 ռիպաստ. մինչ Թէրըլ Պրէնարն եւ Քիւին Կարնէթ (երկուքն ալ Վուլվըր) յաջորդաբար նշանակեցին 25 եւ 22 կէտ:

Արլանտա Հոքս կրեց եղանակի իր չորրորդ պարտութիւնը, 97 - 87 արդիւնքով պարտուած հեռանալ է ետք Վանքուվըր Կրիվիլի դաշտէն:

Իր կատարած նախորդ չորս մրցումները օտար դաշտերու վրայ կատարել է ետք, Սաքրամենթո Քիւնկլի ի վերջու իր դաշտին վրայ կատարեց իր առաջին մրցումը 79 - 75 արդիւնքով պարտութեան մատնել է ետք Փորթլենտ Թրէյլ Պէյլըրը:

Երկուտան մրցումներէն ետք, ցարդ պարտութիւն վերող խումբերն են. Ֆիլադելֆիա Սթըրլզ, Քիլվինտ Քալիֆրը, Ետքս ձեյ եւ Սան Անթոնիօ Սթըրլզ, իսկ ցարդ յաղթանակ չեն արձանագրած Շիքսօ Պուլզ եւ Արլանտա Հոքս:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները.

Օրլանտո ՄէՃիք - Սիչիքըլ Սուվերսոնիքս	110 - 99
Տայաս Մալքոնթ - Տենվըր Նակթթ	108 - 96
Ետքս ձեյ - Միչեսթըս Վուլվըր	98 - 92
Վանքուվըր Կրիվիլի - Արլանտա Հոքս	97 - 92
Սաքրամենթո Քիւնկլի - Փորթլենտ Թրէյլ Պէյլըր	79 - 75

Կեղրոնական Գօտի	3ԱՎԹ.	ՊԱՐՏ.
1.- Քիլվինտ Քալիֆրը	3	0
2.- Չարլոք Հորնթթ	3	1
3.- Միլուոքի Պարս	1	2
4.- Ինտիան Փէյթըր	1	2
5.- Տիլթոյի Փիլթըր	1	3
6.- Թորթլենտ Թրէյլ Պէյլըր	1	3
7.- Շիքսօ Պուլզ	0	3
8.- Արլանտա Հոքս	0	4

Միչեսթըս Գօտի	3ԱՎԹ.	ՊԱՐՏ.
1.- Ետքս ձեյ	4	0
2.- Սան Անթոնիօ Սթըրլզ	3	0
3.- Տայաս Մալքոնթ	3	1
4.- Վանքուվըր Կրիվիլի	3	1
5.- Միչեսթըս Վուլվըր	2	2
6.- Տենվըր Նակթթ	1	3
7.- Հիւսթոն Ռոքթթ	1	3

Խաղաղական Գօտի	3ԱՎԹ.	ՊԱՐՏ.
1.- Լու Անճէրս Լէյթըր	3	1
2.- Ֆէօնիքս Սանկ	3	1
3.- Սաքրամենթո Քիւնկլի	3	2
4.- Կոլտըն Սթըրլզ Ռոքթթ	1	2
5.- Սիչիքըլ Սուվերսոնիքս	1	3
6.- Փորթլենտ Թրէյլ Պէյլըր	1	3
7.- Լու Անճէրս Լէյթըր	1	3

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը.

- Պոսթըն Սթըրլզ - Թորթլենտ Ռոքթթ
- Նիլ Ետքս - Միլուոքի Պարս
- Ուաշինգթոն Ռիվայրս - Շիքսօ Պուլզ
- Լու Անճէրս Լէյթըր - Հիւսթոն Ռոքթթ
- Սան Անթոնիօ Սթըրլզ - Ֆէօնիքս Սանկ
- Արլանտա Հոքս - Փորթլենտ Թրէյլ Պէյլըր

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները.

- Ա. ՆՍԱԿԱ
- Սպարտակ Մոսկուա - Ռէալ Մատրիտ 1-0
- Սփորթին Լիգան - Պալերմ

